ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1964-Ա « 15 » ապրիլի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ԵՎ «ԵՐԵՎԱՆ» ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6.1-րդ կետով.

1. Հաստատել Երևանի ենթակայության.

1) «Երևան քաղաքի պատմության թանգարան», «Ժամանակակից արվեստի թանգարան», «Կարեն Դեմիրճյանի թանգարան, «էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան, «Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան», «Երևանի Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն», «Երևանի մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոն», «Երևան» փողային նվագախումբ», «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա» և «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլհարմոնիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2026 թվականի եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվները՝ համաձայն հհ. 1-20 հավելվածների.

2) «Երևան» փողային նվագախումբ» և «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակներն ու պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հ. 21 հավելվածի:

2. Հանձնարարել սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին.

1) եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվներով «Պարգևատրում» հոդվածի գծով նախատեսված գումարները, ինչպես նաև՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին նախատեսված դրամական միջոցների ազատ մնացորդներն օգտագործել բացառապես Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական ու մշակույթի և տուրիզմի վարչությունների հետ համաձայնեցնելուց հետո.

2) բացառել կազմակերպությունների եկամուտների ու ծախսերի և դրամական միջոցների հոսքերի նախահաշիվներով նախատեսված հոդվածների գծով գերածախսերը:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի ու սույն որոշման 1-ին կետով նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ. Հովհաննիսյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ